երգիծանքը Տորքին հաւասարացնում են Հելլենական Հերակլին եւ Արիական Ռոստոմին: Տորքի մասին եղած էպոսները տարբողում են, թէ նա Սեւ ծովի ափերում կարծր ժայռեր է պոկել ապառաժներից, եղունգներով քերել, դրանցից տախտակներ է շինել, փշրել· կամ այդ ժայռերի վերայ եղունգներով արծիւների եւ գազանների պատկերներ է նկարել եւ թողել հետեւորդների հիացման առարկաներ: Հասել է Պոնտոսի ծովափը, նաւերով փախած թշնամիների ետեւից բլրաշափ ժայռեր է ծովը գցել, որից առաջացած ալիքների տակ ընկղմել է հակառակորդ փախստականներին իրենց նաւերով: Անշուշտ այս էպոսները շարադրողները աչքի առաջ ունեցել են Պոնտոսի ապառաժների վրայ քանդակուած արծիւներ եւ գազաններ, որոնց նմանները կան եւ ուրիշ երկիրներում մինչեւ այսօր:

Սակայն այսօր իրականութիւնը բոլորովին ներհակն է ցոյց տալիս: Ճորոխի ակունքից մինչեւ ծովախառնունքը այնպիսի գեղադէմ բնակչութիւն ունի, որ հիացրել է բոլոր Եւրոպացի գեղագէտ ճանապարհորդներին: Երկու սեռն էլ իրարհետ մրցելով՝ այնպիսի տիպարներ են արտայայտում, որ սքանչացնում են օտարականներին: Մանաւանդ իգական սեռը իր յաղթանդամ կազմուածքի հետ այնպիսի գողտրիկ նրբութիւն ունի, այնպիսի վառվռուն